ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՐՁԱԿԸ

ՄԵԼԻՆԵ ԳԻԼԱՎՅԱՆ

Բանալի բառեր - Հր. Մաթևոսյան, վազք, պատմվածք, մեթոդ, արձակ, հովիտ, դաշտ, օտար:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հոդվածում քննել ենք Հր. Մաթևոսյանի մանկապատանեկան արձակի յուրահատկությունները, նրա դերը մատաղ սերնդի դաստիրակության կազմակերպման գործում:

Պատանի ընթերցողներին հասցեագրված Հր. Մաթևոսյանի ստեղծագործություններն ընդգրկված են «Մեր վազքը» ժողովածուում: Շարունակելով հայ դասական մանկագրության, հատկապես՝ Հովի. Թումանյանի ավանդույթները, Հր. Մաթևոսյանը նոր էջ բացեց հայ մանկագրության մեջ, գրականություն բերեց նոր հերոսներ, մանկագրությունը հարստացրեց նոր գույներով ու նրբերանգներով, կերպարակերտման ու պատկերաստեղծման նոր մեթոդներով ու եղանակներով:

Հր. Մաթևոսյանի՝ պատանի ընթերցողներին հասցեագրված ստեղծագործությունների հերոսները հայրենական մեծ պատերազմի տարիների երեխաներն են, որոնք մանկություն չտեսան ու միանգամից մեծացան:Նրանցից շատերն իրենց հայրերին ու ավագ եղբայրներին միայն նկարներով ու մայրերի պատմածներով են ճանաչում: Նրանք հպարտ են իրենց հայրերով ու եղբայրներով, որոնք ամենաուժեղ, ամենաբարի հայրերն ու եղբայրներն են ամբողջ աշխարհում, որոնք շուտով հաղթելու են թշնամուն, գրավելու են Բեռլինը ու տուն են վերադառնալու որպես իսկական հերոսներ:

Սույն հոդվածի նպատակն է համակարգված ներկայացնել Հր. Մաթևոսյանի մանկապատանեկան արձակը, քանի որ ցայսօր դրան գրականագետներն անդրադարձել են միայն հպանցիկ դիտարկումներով: Անհրաժեշտ են համարում ցույց տալ այդ ստեղծագործությունների արդիականությունը, ճանաչողական ու դաստիարակչական նշանակությունը:

Քննարկման ընթացքում կիրառել ենք գեղարվեստական երկի արժեքորման, վերլուծության մի շարք մեթոդներ, մասնավորապես՝ համեմատական, վերլուծական, քննական, կենսագրական:

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՐՁԱԿԸ

1960-ական թվականներին գրականություն եկած բանաստեղծների ու արձակագիրների գրական ժառանգության մեջ ծանրակշիռ տեղ են գրավում նաև մանուկ ու պատանի ընթերցողներին հասցեագրված ստեղծագործությունները:

Հրանտ Մաթևոսյանի գրական ժառանգության մեջ իրենց արժանի տեղն ունեն նաև մանուկ ու պատանի ընթերցողներին հասցեագրված ստեղծագործությունները, որոնք թե գաղափարական և թե գեղարվեստական առումներով թարմ շունչ էին հայ մանկապատանեկան գրականության մեջ:

Այդ թարմությունը պայմանավորված էր «ձնհալի» տարիների բարեփոխումներով, գաղափարական ու թեմատիկ արգելքների հաղթահարմամբ, որոնք արդեն 1960-ականների կեսերից սկսած գրական զարգացումները մղեցին առաջընթացի նոր հուն, գրականություն բերեցին դարակեսի մարդուն՝ իր մտորումներով, աշխարհընկալման իր սկզբունքներով, նաև՝ հոգսերով ու մտահոգություններով:

Հասարակական-քաղաքական նոր մթնոլորտում էր կրթություն ու դաստիարակություն ստանում նոր սերունդը, որն իր իմֆորմացվածությամբ, մտածողությամբ էականորեն տարբերվում էր մի տասը տարվա առաջվա սերնդից:

Այդ սերնդին այլևս չէր հետաքրքրում նախորդ տասնամյակների մանկապատանեկան գրականությունը, որի պատանի հերոսները նախապատրաստվում են մասնակցելու կոմունիզմի կառուցմանը, փառաբանում էին երջանիկ ներկան, որը դեռևս ավելի երջանիկ ապագայի նախերգանքն է:

Հր. Մաթևոսյանը գրականություն բերեց նոր հերոսների, որոնք ներկայացնում են Հայրենական մեծ պատերազմի տարիների պատանիներին: Դրանցից շատերը գրողի գաղափարական իդեալներ են, կյանքի

դժվարություններն ու դառնությունները ճաշակած, բայց իրենց ինքնությանն ու արժանապատվության հավատարիմ մնացած պատանիներ, որոնք օրինակ կարող են հանդիսանալ նաև մեր օրերում:

Պատանի ընթերցողներին հասցեագրված իր պատմվածքներում և վիպակներում, որոնք զետեղված են «Մեր վազքը» խորագրով ժողովածուում, Հր. Մաթևոսյանը գրականություն է բերում մի նոր աշխարհ, պատանի հերոսների նոր կերպարներ: Նրա հերոսները պատերազմի դաժան տարիների երեխաներն են, որոնց հետ անվանի գրողը մտերմիկ ու անկաշկանդ զրույց է վարում հայրենի բնաշխարհի, մարդու և մարդկայինի, մարդու և ժամանակի, մարդու և բնության խաթարված կապերի վերականգնման, բարության ու սիրո, պարտքի ու պատասխանատվության և այլ հարցերի շուրջ՝ առանց սեփական կարծիքն ու տեսակետները պարտադրելու, առանց ավելորդ ու անիմաստ խրատների ու խորհուրդների:

Հր. Մաթևոսյանը հաշվի է առնում իր հերոսների, որոնք հիմնականում ընթերցողների հասակակիցներն են, տարիքային ու հոգեբանական յուրահատկությունները և նրանց տանում է ինքնաճանաչման ու ինքնահաստատման, խեղճուկրակությունը հաղթահարելու, անարդարությունների դեմ ընդվզելու ճանապարհով:

Ինչպես պայմանականորեն «մեծական» կոչվող արձակում, այնպես էլ պատանիների համար գրված ստեղծագործություններում Հր. Մաթևոսյանի գեղագիտական իդեալը բնության հետ միաձուլված, ինքնաճանաչման ու ինքնամաքրման ձգտող մարդ անհատն է: Գրողի երազանքը երեխայի համար «մի նոր հովիտ փռելն» ու այդ հովիտը նոր մարդկանցով ու կենդանիներով բնակեցնելն է. «Շատ կուզենայի, որ այդ հովտի մարդկանց կյանքը ծաղկեր լավ ժամանակներում, և պատերազմն ու խեղճ թշնամանքը հովիտ խուժելու միջոց չունենային»[1]:

Մանկապատանեկան ստեղծագործությունների հերոսները խեղված ճակատագրով երեխաներ են, Իշխան Անտոնյանի, Զավեն Քոչարյանի, Պավլեի, Ռոստոմի, Աղունի մարդկային տեսակը, ովքեր երկրի «ջիղն» են, նրա հոգսերի, ցավերի, լուծն անմռունչ քաշող «բեռնաձիերը»:

---

[1] **Հրանտ Մաթևոսյան,** Երկեր, Եր; 1985, էջ 3:

«Մեր վազքը» ժողովածուի պատանի հերոսները ռազմաճակատ մեկնած իրենց հայրերի, եղբայրների փոխարեն, որոնցից շատերը չեն վերադարձել կամ վերադարձել են հաշմված ու խեղված, հող են մշակում, անասուն են պահում, և նրանց պատերազմն ատելուց ավելի շատ մի մեծ ուժ, մի ուրիշ բան էր հարկավոր, որ նրանք կանեին>>[1]

Նրանք փոխարինում են իրենց ծնողներին և վիրավորվում են, երբ սահմանափակում են իրենց ինքնուրույնությունը և, ընդհանրապես, որպես փոքրի, հոգ են տանում իրենց մասին, ուղղություն տալիս, վերահսկում, պահանջում հնազանդվել: Պատժում են, հաշվի չեն առնում իրենց հետաքրքրությունները, կարծիքները: Այս ճանապարհով են Հր. Մաթևոսյանի պատանի հերոսները մշակում սեփական արժանապատվության հստակ զգացում և սիրում են, երբ իրենց ընդունում են որպես մարդու, որին չի կարելի ճնշել, զրկել ինքնուրույնության իրավունքից: Պատանիները ցանկանում են, որ մեծերի ու իրենց հարաբերությունները կրեն բարեկամական բնույթ, համագործակցության ձև, որին հատուկ են փոխադարձ հարգանքն ու վստահությունը:

Պատերազմը հեռու, շատ հեռու է, բայց նրա ուրվականը շրջում է Անտառամեջում ու Ծմակուտում, որտեղից «քառասունութ տղա ետ չէր եկել ռազմաճակատից, քառասունութ հնձվոր, սայլվոր, եզնարած, ուսուցիչ, մաճկալ, փայտահատ, հյուսն՝ մի ամբողջ զրնգուն համերգ» (Հրանտ Մաթևոսյան, «Մեր վազքը», Եր; 1978, էջ 3):

Կյանքը, սակայն, շարունակվում է, թեպետ «մայրերը հունձ էին անում ու լաց էին լինում: Գուլպա էին գործում ու լաց էին լինում: Հետո լուռ էին լաց լինում: Ձիերին տարել էին պատերազմ… եզների հետ բանում էին ու լաց լինում»[2]:

Անտառամեջում հատուկենտ տղամարդիկ էին մնացել, ու նրանց որդիները դարձել էին հասակակիցների արհամարհանքի առարկա, օտարվել շրջապատից: Նրանցից մեկին հենց «Օտար» մականունով էին կնքել համադասարանցիները. «Օտարի» հոր սիրտը հիվանդ էր, նվում էր ու չէր մեռնում: Նվնվում էր ու չէր մեռնում: Նվնվում էր ու ռազմաճակատ

[1] Նույն տեղում, էջ 6:
[2] **Հրանտ Մաթևոսյան,** «Մեր վազքը», Եր; 1978, էջ 186:

չէր գնում, իրենց տանը, իր որդու կողքին էր, իր որդուն էր օգնում լուծելու մաթեմատիկայի խնդիրները, իսկ մեր հայրերը ռազմաճակատում էին»[1]:

Անտառամեջի տղաները միատեսակ շորեր էին հագնում, միագույն, «շալակով կաղնու տերև էին բերում, որպեսզի մայրերը կաղնու տերևով դարչնագույնեն բուրդը, իսկ Օտարն, ահա, կարմիր վերնաշապիկ էր հագել: Նրա մայրը գրադարանի հին պաստառը, որին կավճաշաղախով դաջված էր եղել «Կորչեն օտարերկրյա զավթիչները», վառ կարմիր այդ պաստառն ահա գրադարանից տարել էր տուն, լվացել էր և որդու համար վերնաշապիկ էր կարել»[2]:

Անհայր որդիների Անտառամեջում Հր. Մաթևոսյանի պատանի հերոսները՝ Մադաթը, Արտավազդը, Արմիկ Մնացականյան անուն-ազգանունով տղան, «կարիքի ամբողջ գիտակցությամբ հանդերձ» ապրում էին երջանկությամբ ու երջանկությունը կորցնելու տագնապով: Վախկոտությունն այդ տարիքում խիստ դատապարտվում էր: Համարձակ և ուժեղ երևալու, հասակակիցների ու համադասարանցիների, ուսուցիչների ուշադրությանն ու հարգանքին արժանանալու համար պատանին ձգտում է լինել ուժեղ, համարձակ, դիմացկուն: Պատանիները չեն ներում թուլությունը, խեղճությունը, չեն սիրում Օտար մանկանունով տղային: Նրա թուլությունը երեսով էին տալիս, իսկ նա միայն աչքերն է թարթում ու սպասում: Այդպես միայն ծառն է թույլ տալիս խոսել միայն իրեն մորթելու մասին, ջուրն է թույլ տալիս գովել իր համը կամ չհավանել իրեն, պայծառ արևածաղիկն է սպասում իր պոկվելուն կամ փրկվելուն[3]:

Այս համապատկերում խոր իմաստ է ձեռք բերում Աղունի խորհուրդը. «Մի անգամ գլուխդ այնպես պահիր, որ գլխիդ խփողի ձեռքը ցավի, տեսնեմ նորից կխփի՞, չի խփի»[4]:

«Մեր վազքը» ժողովածուի պատմվածքներում ու վիպակներում Հր. Մաթևոսյանը գյուղաշխարհի հետ կապված իր մտահոգություններն ու տագնապները պարզ ու մատչելի եղանակով փոխանցում է պատանի հե-

---

[1] Նույն տեղում, էջ 64:
[2] Նույն տեղում, էջ 31:
[3] Նույն տեղում, էջ 56:
[4] **Հրանտ Մաթևոսյան, «Ծառերը», Եր. , 1982, էջ 20**

ռոսներին՝ նրանց մեջ մշակելով հայրենի եզերքին կապված մնալու, նրա հոգսերն ու ցավերը նաև իրենը համարելու, կիսելու ու ամոքելու զգացումներ:

Գրողի մտահոգություններն ու տագնապները հիմք ունեն, որովհետև Անտառամեջից ու Ծմակուտից մայրաքաղաք տանող նեղ կածանը դարձել է լայն ու բանուկ ճանապարհ, հողի մշակը խորթացել է հողից, անասնապահը ավելի բարեկեցիկ կյանք է փնտրում մայրաքաղաքում, սայլվորը երազում է ավտոմեքենայի մասին. մեր սարերը մնում են մենակ, և «-Մենք ենք մեր սարերը» հրանտմաթևոսյանական բանաձևումը պատանի ընթերցողներին է փոխանցվում որպես աշխատանքի ու աշխատավոր մարդու՝ մենքի ու մեր ուժի՝ սարերի վերաբերյալ պատգամ:

Արմիկ Մնացականյան անուն-ազգանունով տղայի տեսակն է Հր. Մաթևոսյանի իդեալը, որը նա ի ցույց է դնում իր ընթերցողին: Ինչ էլ որ լինի Մանուկ Մնացականյան անուն-ազգանունով տղան չի լքելու հայրենի եզերքը, որովհետև «հայրն այնտեղ մենակ էր մնալու, մենակ էր մնալու նաև գլուխը ոչխարի մկրատով խուզած, անգլխարկ, գլուխ թեքելով շան պես նայող փոքր եղբայրը» **(«Պատիժ»)**:

Ծմակուտից մայրաքաղաք տանող ճանապարհով գյուղը լքում են նրա վաղվա տերերը՝ Ստեփանը՝ Ստյոպան, ով «դպրոցի աչքի լույսն է, գերազանցիկ է, ամբողջ Երևան քաղաքում մատով են ցույց տալիս: Հանդիսավոր տոներին բեմ է բարձրանում ու խոսում, արտասանում, սովորեցնում» **(«Պատիժը»)**: Ստեփանը՝ Ստյոպան, բնահողից արմատախիլ արված ծառ է ու օտար հողում չի արմատակալելու, պտուղ չի տալու:

Իր պատանի ընթերցողներին Հր. Մաթևոսյանը սովորեցնում է աշխարհը ճանաչել հողի ու բնության մարդու հայացքով: Միայն այս պարագայում, ինչպես գրում է ակադեմիկոս Սերգեյ Սարինյանը, հնարավոր կլինի հայտնաբերել «այն թեզը, որի վրա Մաթևոսյանը կառուցում է իր գեղարվեստական իդեալը, ապա վերջին հաշվով այն կարելի կլինի փնտրել իր հարազատ միջավայրից կտրվող պատումն ու խոհերի մեջ, որոնք պարունակում են և կարոտ, և վերհուշ, և ինչ-որ չափով նաև ափսոսանք: Ափսոսանք ոչ թե մի այլ աշխարհի խաթարող բարքերի հակադրությունից, այլ հենց հարազատության, բնական, ազատության, բանաս-

տեղծական գեղեցկության այլևս անդարձ զգացման թելադրանքով: Զգայուն հերոսը բաժանվում է ոչ միայն միջավայրից, այլև հրաժեշտ է տալիս կյանքի մի շրջանի՝ պատանեկությանը» **(Սարինյան Մերգեյ, Հայոց գրականության երկու դարը, Եր; 2004, էջ 581)**:

ԵԶՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հր. Մաթևոսյանը մանկապատանեկան գրականություն բերեց նոր հերոսներ, որոնք ներկայացնում են Հայրենական մեծ պատերազմի տարիների սերունդը, կերպարակերտման ու պատկերաստեղծման նոր եղանակներ ու մեթոդներ, նոր գույներ ու նրբագծեր:

Նրա «Մեր վազքը» ժողովածուն, որտեղ ամփոփված են պատանի ընթերցողներին հասցեագրված ստեղծագործությունները, թարմություն էր հայ մանկապատանեկան գրականության մեջ ինչպես գաղափարական , այնպես էլ գեղարվեստական առումներով, պատումի անպաճույճ ոճով, ուշագրավ լեզվամտածողությամբ: «Մեր վազքը» ժողովածուի ստեղծագործությունները պահպանում են իրենց արդիականությունը նաև մեր օրերում և կարող են մեծապես օգտակար լինել պատանի ընթերցողների համար:

Մանկապատանեկան գրականությունը ընդհանուր գրականության անբաժանելի մասն է և այն պետք է արժևորել կոնկրետ ժամանակաշրջանի գրական զարգացումների ընդհանուր համապատկերում:

Սկսած 1950-ական թվականների կեսերից, երբ հաղթահարվեց անհատի պաշտամունքը, գրական-գեղարվեստական զարգացումները մտան առաջընթացի նոր հուն, հաղթահարվեցին գաղափարախոսական ու թեմատիկ արգելքները, գրականություն վերադարձավ նախորդ տասնամյակներում այնտեղից արհեստականորեն օտարված անհատը՝ իր նոր աշխարհընկալմամբ, նաև՝ իր մտահոգություններով ու տագնապներով:

Հրանտ Մաթևոսյանի ամբողջ ստեղծագործություններում («Մենք ենք մեր սարերը», «Ծառերը», «Գոմեշ», «Ալխոն», «Աշնան արև» և այլն) նոր ժամանակների մարդն է, ով հող է հերկում, անասուն է պահում, հունձ է անում, երեխա է մեծացնում ու դաստիարակում, մարդկանց է բուժում: Նրա հերոսները հայրենի եզերքին արմատներով կառչած մարդիկ են, ո-

րոնք, ի տարբերություն շատերի, երբեք չեն լքելու այդ եզերքը, նրանք «երկրի ջիղն» են, նրա հոգսերի ու ցավերի «բեռնաձիերը»:

«Մեր վազքը» ժողովածուի ստեղծագործությունների հերոսները ընթերցողների հասակակիցներ են, որոնք փոխարինում են ռազմաճակատ մեկնած իրենց հայրերին ու եղբայրներին ու նրանց փոխարեն հունձ են անում, հող են մշակում, անասուն են պահում ու հպարտ են, որ իրենց հայրերն ու եղբայրները գտնվում են ռազմաճակատում և ոչ թե Օտար մականունով տղայի հոր պես «սրտի նոպաներից» նվնվացել ու մնացել է թիկունքում:

Мелине Гилавян, Детская проза Гранта Матевосяна - В статье рассматриваются особенности детской и юношеской прозы Г.Матевосяна, ее роль в воспитании подрастающего поколения.

Грант Матевосян ввел в детскую литературу новых героев, представляющих поколение Великой Отечественной войны, используя новые способы и методы создания характеров и образов, проявив новые оттенки и особенности писательского мастерства.

В сборник писателя «Наш бег» вошли произведения, адресованные юным читателям. Он стал новостью в армянской детской и юношеской литературе и в идейном, и в художественном аспектах. Незамысловатый стиль и авторский язык повествования произведений сборника «Наш бег» и сегодня сохраняет свою актуальность и может быть полезен для юного читателя.

Детская литература является неотъемлемой частью общей литературы и ее следует рассматривать в общем обзоре литературных событий конкретного периода времени.

С середины 1950-х годов в связи с развенчанием культа личности литературно-художественный процесс, преодолев идейно-тематические преграды, начинает новый путь развития, в литературу вернулась искусственно отчужденная предшествующими десятилетиями личность со своими заботами и тревогами и с новым мировоззрением.

Во всех произведениях Гранта Матевосяна («Мы и наши горы», «Деревья», «Буйволица», «Алхо», «Осеннее солнце» и др.) присутствует совре-

менный человек, который пашет землю, держит скот, собирает урожай, растит и воспитывает ребенка, лечит людей. Его герои – люди, укоренившиеся на родной земле, которые, в отличие от многих, никогда не покинут этот край, они – «стержень страны», «вьючные лошади» ее тревог и боли.

Герои произведений сборника «Наш бег» – ровесники читателей, заменивших ушедших на фронт отцов и братьев, вместо которых собирают урожай, возделывают землю, держат скот и гордятся, что их отцы и братья на передовой, а не как оставшийся в тылу отец мальчика по прозвищу Отар (Чужой, Иностранец), жалующийся на "сердечные приступы".

Meline Gilavyan, Hrant Matevosyan's children prose - The article examines the features of G.Matevosyan's children's and youth prose, its role in the upbringing of the younger generation. Hrant Matevosyan introduced new heroes into children's literature, representing the generation of the Great Patriotic War, using new ways and methods of creating characters and images, showing new shades and features of writing skills. The collection of the writer "Our Run" includes works addressed to young readers. It has become news in Armenian children's and youth literature both in ideological and artistic aspects. The uncomplicated style and author's language of narration of the works of the collection "Our Run" remains relevant today and can be useful for a young reader. Children's literature is an integral part of general literature and should be considered in a general overview of literary events of a particular time period. Since the mid 1950s, in connection with the debunking of the cult of personality, the literary and artistic process, having overcome ideological and thematic barriers, begins a new path of development, an artificially alienated personality returned to literature with his worries and anxieties and with a new worldview. In all the works of Hrant Matevosyan ("We and our Mountains", "Trees", "Buffalo", "Alho", "Autumn Sun", etc.) there is a modern man who plows the land, keeps cattle, harvests, raises and educates a child, treats people. His heroes are people rooted in their native land, who, unlike many, will never leave this land, they are the "core of the country", the "packhorses" of its anxieties and pain. The heroes of the works of the collection "Our Run" are the same age as the readers who replaced the fathers and brothers who went to the front, instead of

whom they harvest, cultivate the land, keep cattle and are proud that their fathers and brothers are on the front line, and not like the father of a boy nicknamed Otar (a stranger, a Foreigner) who complains about "heart attacks."

Ուղարկվել է խմբագրություն 20.11.2022թ.
Գրախոսվել է 22.12.2022թ.
Ստորագրվել է տպագրության 24.12.2022թ.